Հաստատված է
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
գնման գնահատող հանձնաժողովի
2015թ. հունվարի 20-ի N 1 որոշմամբ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

# Հ Ր Ա Վ Ե Ր

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով 2015թ. գնումների իրականացման

Հարգելի մասնակից

Նախքան շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով Տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հրավերի

## ՄԱՍ I


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի որակավորման չափանիշները
3 Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտերի բացումը
7. Հայտերի գնահատումը, համեմատումը և բաց ընթացակարգի արդյունքների ամփոփումը
8. Պայմանագրի կնքումը
9. Պայմանագրի կատարման ապահովումը
10. Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման չկայացած հայտարարելը
11. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


## ՄԱՍ II. ՇՐՋԱՆԱԿՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


Ընդհանուր դրույթներ
Մասնակցի որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը
Հայտի գնային առաջարկը
Հայտը պատրաստելու կարգը
Հավելվածներ

Սույն հրավերը տրամադրվում է տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման համար՝ մասնակիցներին ուղարկվող նամակին կից:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշումով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացմանն մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման պայմանների՝ գնման առարկայի, շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտը պատրաստելիս:

Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, որոնց հետ <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ը կնքել է ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների շրջանակային համաձայնագրեր:

Սույն շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

## ՄԱՍ I

### 1. Գնման առարկայի բնութագիրը

Գնման առարկա է հանդիսանում «Տպագրական» աշխատանքների ձեռքբերումը:

Գնման առարկան բաղկացած է «Նորավանք» ԳԿՀ-ի կողմից 2015 թվականին հրատարակվող ամսագրերի և գրքերի տպագրության աշխատանքներից:

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 4 հավելվածում:

### 2. Մասնակցի որակավորման չափանիշները

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով Տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացմանը մասնակցում են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ կնքված ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների շրջանակային համաձայնագիր կնքած անձինք:

### 3. Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել Պատվիրատուին՝ գրավոր ձևով: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ:

3.2 Պատվիրատուն հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է հարցումը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հրավերի I մասի 3.1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ կարող են շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հրավերում փոփոխություններ կատարվել:

3.5 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

3.6 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել սույն հրավերին համապատասխան կազմակերպված շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման անցկացումից ցանկացած ժամանակ՝ շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հրավերի ստացման պահից մինչև շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հանձնաժողովի կողմից հաղթող ընտրելու մասին որոշման կայացումը:

### 4. Հայտը ներկայացնելու կարգը

4.1 Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում հրավերով սահմանված կարգով հայտ: Մասնակիցը չի կարող ներկայացնել մեկից ավելի հայտ, բացառությամբ սույն հրավերի 5.2 կետով նախատեսված՝ հայտի փոփոխում ներկայացնելու դեպքի: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգում:

4.2 Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան հրավերում նշված վերջին օրվա ժամը 12.00-ն, ք. Երևան, Գարեգին Նժդեհի 23/1, N 13 սենյակ հասցեով: Ներկայացված հայտերն ընդունում, դրանց ներկայացման ճշտությունը ստուգում և ներկայացված հայտերը գրանցամատյանում գրանցում է գնահատող հանձնաժողովի քարտուղարը կամ հանձնաժողովի անդամը: Հայտերը քարտուղարի կամ հանձնաժողովի անդամի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է այդ մասին տեղեկանք:

4.3.Մասնակիցները Պատվիարտուին է ներկայացնում է հայտ, որը ներառում է

ա) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում (հավելված N 1)

բ) գնման առաջարկ, որը բաղկացած է գնի առաջարկից (հավելված N 2) և ոչ գնային առաջարկից (տեխնիկական առաջարկ) (հավելված N 3)

4.4 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում փոստով ուղարկված հայտերի՝ վերջնական ժամկետից ուշ կամ բացված տեսքով կամ այլ կերպ վնասված ստանալու համար:

## 5. Հայտի գործողության ժամկետը, հայտը հետ վերցնելը և դրանում փոփոխություն կատարելը

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված` հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում հայտի փոփոխման ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ «հայտը պատրաստելու» հրահանգի 4.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացումը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

## 6. Հայտի ապահովում

Չի նախատեսվում

## 7. Հայտերի բացումը

7.1 Հայտերը բացվում են գնահատող հանձնաժողովի նիստում՝ շրջանակային ընթացակարգի հրավերում նշված ժամկետի`30.01.2015թ. ժամը 14:00-ին, ք.Երևան, Գարեգին Նժդեհի 23/1, N 13 սենյակ հասցեում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ` հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման` սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ` բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ` յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի` հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը`

տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

7.3 Գնահատող հանձնաժողովը հայտերը բացելուց հետո կազմում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությունը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է.

ա) տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

բ) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

գ) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

դ) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

ե) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանելու մասին.

զ) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

է) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

ը) գնման ընթացակարգի չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

թ) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

ժ) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

ի) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

7.5. Եթե գնահատող հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է արձանագրությանը: Պատվիրատուն պարտավոր է ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն և կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառած վնասի համար, բացառությամբ սույն օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների: Հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրան բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա հայտնում է ինքնաբացարկ՝ բացառելով իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին, իսկ տվյալ ընթացակարգում նրան փոխարինում է հանձնաժողովի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն:

7.6. Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել գնահատող հանձնաժողովի նիստերին: Մասնակիցը կամ նրանց ներկայացուցիչը կարող են պահանջել գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում: Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն Մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին: Ընդ որում, շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման դեպքում արձանագրությունն էլեկտրոնային եղանակով միաժամանակ տրամադրվում է նաև օրենքով նախատեսված լիազոր մարմնին, որն այն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է ինտերնետային կայքում:

## 8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը

8.1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են և մերժված հայտի պատճենը վերադարձվում է մասնակցին նիստին հաջորդող աշխատանքային օրը:

8.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս, հրավերով սահմանված դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի հաշվի են առնվում ոչ գնային չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ:

8.3 2-րդ ենթակետով նախատեսված գնահատումը իրականացվում է հայտով ներկայացված գնային առաջարկի՝ թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը ու դրանց, ինչպես նաև ինքնարժեքի հաշվարկման (թվաբանական) ճշտությունը գնահատելու միջոցով: Թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանության դեպքում հիմք են ընդունվում տառերով արտահայտված տվյալները: Թվաբանական անճշտությունների դեպքում, հիմք ընդունելով չափի միավորի ցուցանիշները, կատարվում է վերահաշվարկ:

8.5. Եթե մասնակցի ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին (կարգին), ապա այդ Մասնակցի հայտը մերժվում է և համաձայն գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

## 9. Պայմանագրի կնքումը

9.1 Պայմանագիրը (հավելված N4) կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և գնման պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հրավերով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացնում պայմանագրի կատարման ապահովումը (հավելված N5), իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է գնման պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Այդ դեպքում Պատվիրատուն գնման պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում շրջանակային ընթացակարգում երկրորդ, իսկ վերջինիս կողմից առաջարկը չընդունվելու դեպքում՝ երրորդ տեղը զբաղեցրած Մասնակցին:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.5 Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել ՀՀ ֆինանսների նախարարի 21.12.2013թ. N 1153-Ն հրամանով նախատեսված կարգին համապատասխան արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային հրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները:

9.6 Գնման հետ կապված կողմերի՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են պայմանագրով:

## 10. Պայմանագրի կատարման ապահովումը

10.1 Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիր կնքվում է, եթե ընտրված մասնակիցը, սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է պայմանագրի կատարման ապահովում (հավելված N5):

10.2 Պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում, միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի ձևով, որի չափը պետք է հավասար լինի պայմանագրի գնի տաս տոկոսին: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10.3 Պայմանագրի կատարման ապահովման չափը պետք է հավասար լինի պայմանագրի գնի տաս տոկոսին, ընդ որում, հատկացվելիք կանխավճարի առավելագույն չափը սահմանվում է պայմանագրի նախագծով, իսկ հաղթող ճանաչված մասնակիցն իրավասու է ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու կանխավճարից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում ընտրված մասնակիցը ներկայացնում է նաև կանխավճարի չափով ապահովում, երաշխիքի ձևով կանխավճարի մարման կարգը սահմանվում է պայմանագրով:

10.4 Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պայմանագրի կատարման կամ կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին՝ պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան 5 օրացուցային օրվա ընթացքում:

## 11. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելը

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ գնման ընթացակարգը հանձնաժողովը չկայացած է հայտարարում, եթե՝

ա) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

բ) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

գ) ոչ մի հայտ չի ներկայացվել.

դ) գնման ընթացակարգի արդյունքում գնման պայմանագիր չի կնքվում:

11.2. Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո Պատվիրատուն 5 օրացուցային օրվա ընթացքում, լիազոր մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորումը:

## 12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

12.1 Յուրաքանչյուր անձ ունի բողոքարկման իրավունք, եթե հայտարարում է, որ Պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով կրել է կամ կարող է կրել վնասներ:

12.2 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի՝

ա) բողոքարկել Պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունները գնումների բողոքարկման խորհրդին, Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն.

բ) դատական կարգով բողոքարկել բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն:

ՄԱՍ II
ՀՐԱՀԱՆԳ
ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Գնման ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ: Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով գնման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման մասնակցելու դիմումով (հավելված N 1):

1.4 Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, պետք է կազմված լինեն հայերեն:

## 2. Մասնակցի որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը

Գնումներին մասնակցելու՝ հրավերի I մասի 2-րդ կետով նախատեսված՝ հրավերի պահանջներին Մասնակիցը Պատվիարտուին է ներկայացնում է հայտ, որը ներառում է

ա) գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմում (հավելված N1)

բ) գնման առաջարկ, որը բաղկացած է գնի առաջարկից (հավելված N2 ) և ոչ գնային առաջարկից (տեխնիկական առաջարկ) (հավելված N3)

## 3. Հայտի գնային առաջարկը

3.1 Առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Գինը կարող է լինել գործոնային, երբ պայմանագրի գինը փոփոխվում է պայմանագրով նախատեսված (գործոնների) փոփոխության ազդեցությամբ: Հակառակ դեպքում պայմանագրի գինը կայուն է և կողմերը պարտավոր են պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարել պայմանագրի գնի շրջանակում:

3.2 Շրջանակային համաձայնագրերով գնումների իրականացման հայտի գինը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

3.3 Գնի վերաբերյալ առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն հրավերի հավելված 2-ով նախատեսված տեսքով:

## 4. Հայտերը պատրաստելու կարգը

4.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն Մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա

համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճե» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս կողմից լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.2 Սույն հրահանգի 4.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) շրջանակային համաձայնագրերով գնումների ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.3 Սույն հրահանգի 4.1 և 4.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը մերժվում են և առանց բացվելու վերադարձվում ներկայացնողին:

Հավելված N 1
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների
ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով
2015թ. գնումների իրականացման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

# ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

______________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

«Նորավանք» ԳԿՀ-ի կողմից N ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով հայտարարված հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող դիրքի
ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

______________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ________________:
ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

______________________________ ________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն, Ազգանուն) ստորագրությունը

Կ.Տ.

«___» _________ 20___թ.

Հավելված 2
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների
ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով
2015թ. գնումների իրականացման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի  ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով 2015 թվականի գնումների իրականացման հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

________________________________ ____________________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը) (ստորագրությունը)

Կ.Տ.

________________________2015 թ.

ամիսը, ամսաթիվը

**Հավելված 3**
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի

ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների
ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով
2015թ. գնումների իրականացման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

## Ո չ գ ն ա յ ի ն ա ռ ա ջ ա ր կ (տ ե խ ն ի կ ա կ ա ն ա ռ ա ջ ա ր կ)

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերով 2015թվականի գնումների իրականացման հրավերը, այդ

թվում՝ կնքվելիք գնման պայմանագրի նախագիծը __________________________________ -ն առաջարկում է
մասնակցի անունը (անվանումը)

պայմանագիրը կատարել

ա) կամ նախագծով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան
բ) կամ նոր՝ կից ներկայացվող տեխնիկական առաջարկներին համապատասխան

*** Ծանոթություն 1՝ Նոր առաջարկները կցվում են**
*** Ծանոթություն 2՝ Նշել ընտրվող տարբերակը (ները)**

____________________________________________ ____________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

________________________2015 թ.
ամիսը, ամսաթիվը

Նախագիծ

Հավելված 4
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԿՀ-Ի ՇՀԱՇՁԲ-11/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «Նորավանք» ԳԿՀ ԱՁԲ-4

**ք. Երևան** **«___» __________ 2015թ.**

«Նորավանք» ԳԿՀ-ն , ի դեմս գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ------------------------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ------------------ աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) Նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2)ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3)ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, մեքենա-սարքավորումներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)Պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

*/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:*

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից յոթօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 10 686 500 (տաս միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1** Պայմանագրի գնից՝---------- (------------------------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

*** Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:*

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծած ու փորձաքննություն իրականացրած անձինք պատվիրատուին վճարում են տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման և (կամ) դրա հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

*<u>/Նախատեսվում է նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների գնման դեպքում/:</u>*

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի

միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արծանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ.

2) Կատարողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

*** 7.5 Սույն պայմանագիրը կնքվում ընդհանուր՝_____ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

***Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Նորավանք» ԳԿՀ<br>ՀՀ, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1<br>Արդշինինվեստբանկ<br>Հ/Հ 247010078704<br>ՀՎՀՀ 02557191<br>Գործադիր տնօրեն՝<br>_________________ Գ. Հարությունյան | <br><br><br><br><br>տնօրեն՝<br>_________________ |

**Հավելված N 1**
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի
հավելված 4-ով «___»__________ 2014 թ. կնքված
N «Նորավանք» ԳԿՀ ԱՁԲ-3 գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տպագրական աշխատանքների

Ձեռքբերվող Աշխատանքի նկարագիր

**Գիրք**

| | |
|---|---|
| Չափսը | 15սմ x 21,5սմ |
| Ծավալը | 200-400 էջ |
| Կազմը | 300 գ/մ$^2$ |
| Թուղթը | 90 գ/մ$^2$ կավճապատ |
| Տպագրությունը | գունավոր |
| Շապիկը | 4+4 |
| Տպաքանակը | 200-300 |
| Տպագրման ժամկետը | 5 օր |

**«21-րդ ԴԱՐ» ամսագիր**

| | |
|---|---|
| Չափսը | 18,2սմ x 25,7սմ |
| Ծավալը | 120-200 էջ |
| Կազմը | 300 գ/մ$^2$ |
| Թուղթը | 80 գ/մ$^2$ օֆսեթ |
| Տպագրությունը | գունավոր |
| Շապիկը | 4+4 |
| Տպաքանակը | 200 |
| Տպագրման ժամկետը | 3 օր |
| Պարբերականությունը | տարեկան 8- 12 |

**«ԳԼՈԲՈՒՍ» տեղեկագիր**

| | |
|---|---|
| Չափսը | 18,2սմ x 25,7սմ |
| Ծավալը | 70-130 էջ |
| Կազմը | 300 գ/մ$^2$ |
| Թուղթը | 80 գ/մ$^2$ օֆսեթ |
| Տպագրությունը | Գունավոր |
| Շապիկը | 4+4 |
| Տպաքանակը | 150 |
| Տպագրման ժամկետը | 3 օր |
| Պարբերականությունը | տարեկան 8-12 |

| Աշխատանքի կատարման ժամկետը | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի կնքման օրը | Պայմանագրում նշված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Նորավանք» ԳԿՀ | |
| ՀՀ, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1 | |
| Արդշինինվեստբանկ | |
| Հ/Հ 247010078704 | |
| ՀՎՀՀ 02557191 | |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն ________________ |
| ________________ Գ. Հարությունյան | |

Հավելված N 2
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի
հավելված 4-ով «___»___________ 2015 թ. կնքված
N «Նորավանք» ԳԿՀ ԱՁԲ-3 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Տպագրական աշխատանքների

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | | 8,3 % | 8,3% | 8,3 % | 8,3% | 8,3 % | 8,3% | 16,6 % | _% | 8,4% | 8,4% | 8,4% | 8,4% | 100% |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Նորավանք» ԳԿՀ
ՀՀ, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Արդշինինվեստբանկ
Հ/Հ 247010078704
ՀՎՀՀ 02557191
Գործադիր տնօրեն
________________ Գ. Հարությունյան

**ԿԱՏԱՐՈՂ**

Տնօրեն ________________

**Հավելված N 3**
«Նորավանք» ԳԿՀ-ի ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
տպագրական աշխատանքների ձեռքբերման
նպատակով շրջանակային համաձայնագրերով
գնումների իրականացման հրավերի
հավելված 4-ով «___»__________ 2015 թ. կնքված
N «Նորավանք» ԳԿՀ ԱՁԲ-3 գնման պայմանագրի

**Հավելված N 1**
ՀՀ ֆինանսների նախարարի
2013թ. օգոստոսի 6-ի N 673-Ն հրամանի

| Կատարող | Պատվիրատու______ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը________________ | գտնվելու վայրը________________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| ____________________ | ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «________» 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ «________________________________» գնման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «____________» 2015թ.
Պայմանագրի համարը՝ ________________________
Պատվիրատուն, «Նորավանք» ԳԿՀ-ն, ի դեմս _________ տնօրեն՝_____________________ և Կատարողը՝ ________________ ի դեմս ________________________ի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___» «________» 2015թ-ից «___» «________» 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | ------------ | ---------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 5
ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Երևան «___» __________20__թ.

__________________________________, ի դեմս Ընկերության տնօրեն՝
Մասնակցի անվանումը
__________________________________, որը գործում է Ընկերության կանոնադրության
Ընկերության տնօրենի անուն, ազգանուն
հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնություն.

## 1. *Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է __________________________
Պատվիրատուի անվանումը
(այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Տպագրական աշխատանքների ձեռքբերման» NՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Տպագրական աշխատանքների ձեռքբերման» N «Նորավանք» ԳԿՀ ԱՁԲ-3 գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ __________________
թվերով
(__________________________________) ՀՀ դրամի չափով:
տառերով

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «__________________________»
Մասնակցի բանկի անվանումը
կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «__________________», հանձնարարում է
Մասնակցի անվանումը
«__________________________»-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր
Մասնակցի բանկի անվանումը
բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում

«________________________________» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր
Պատվիրատուի անվանումը
պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## 2. *Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

________________________________________,
Մասնակցի անվանումը (անունը)

________________________________________,
(հասցեն)

________________________________________,
(բանկ)

Հ/Հ ____________________________

ՀՎՀՀ ____________________________

________________________________________,
(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

________________________________________,
(ստորագրություն)

________________________________________,
(Մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի) անուն, ազգանուն)

________________________________________,
(ստորագրություն)

Կ.Տ.